## ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> և <<Բնապահպանական վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> և <<Բնապահպանական վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ փաթեթ) ընդունման նպատակը <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի միջև առկա անհամապատասխանությունների և հակասությունների վերացումն է: Այդ առումով կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում և <<Բնապահպանական վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում:

Բացի այդ, անհրաժեշտ է նաև <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, մասնավորապես՝

1) ապահովել Բնության պահպանության միջազգային միության կողմից սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքների բոլոր կատեգորիաների ստեղծումը.

2) նպաստել տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմանը բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման գործընթացում:

Փաթեթի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն կարող առաջանալ, քանի որ ընդունման հետևանքով կկարգավորվեն բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման, պահպանության, օգտագործման և կառավարման հարաբերությունները

2.Փաթեթի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա կարող են առաջանալ բացասական հետևանքներ, նկատի ունենալով, որ <<Բնության

հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում՝

- բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակները և հիմքերը.
- հստակ չեն շարադրված բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման սկզբունքները.
- բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքների կատեգորիաների խնդիրները.
- բացակայում են բնության հուշարձանի դասակարգումը, ստեղծման չափանիշները և պահպանության ռեժիմը.
- բացակայում է արգելավայրի պահպանության ռեժիմը.
- բացակայում են պահպանման գոտու, էկոլոգիական միջանցքի և էկոլոգիական ցանցի կառավարման սկզբունքները և պահպանության ռեժիմը.
- բացակայում են կենսոլորտային արգելոցի ստեղծման և կառավարման հարցերը:

3.Փաթեթը բնապահպանության ոլորտին առնչվում է ուղղակիորեն, սակայն այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

4.Օրենքների փաթեթի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը առկա է, սակայն չի ներկայացվում համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով:

5. Փաթեթի կիրարկման արդյունքում կանխատեսվող հետևանքների գնահատման ժամանակացույցը՝

1) նախնական գնահատում՝ փաթեթն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող երկրորդ տարի,

2) վերջնական գնահատում՝ փաթեթն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող երրորդ տարի: